

GARM GROUP

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԱՏԱԼՈԳ

Առաստաղային համակարգեր

Կախովի համակարգեր · Գրիլյատո · Գրիլյատո GL15
Կասետային առաստաղներ · Խորանարդաձև առաստաղ

+374 99 706 607 · garm.group.am@gmail.com

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԱՏԱԼՈԳ

Բովանդակություն

01 **Կախովի համակարգեր** 03
Standard T24 · Premium T24 · Premium T15

02 **Գրիլյատո դասական** 11
Բջջային առաստաղ U-աձև պրոֆիլներով

03 **Գրիլյատո GL15** 17
Կասետային տիպի բջջային առաստաղ

04 **Բաց տիպի կասետ** 23
GARM Line · GARM K45 · GARM K90

05 **Փակ տիպի կասետ** 27
Կասետային առաստաղ փակ համակարգով

06 **Խորանարդաձև առաստաղ** 33
Ուղղանկյուն կտրվածքով ռեյկային առաստաղ

07 **Փաթեթավորման նորմեր, տեղափոխում և պահեստավորում** 37



ԲԱԺԻՆ 01

01 Կախովի համակարգեր

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

GARM կախովի համակարգերը կախովի առաստաղի կմախքն են, որը բաղկացած է 3600 մմ, 1200 մմ և 600 մմ երկարությամբ T-աձև պրոֆիլներից:

ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ


GARM ապրանքանիշի մետաղական առաստաղները կիրառվում են բազմահարկ և ցածրահարկ շենքերի, արտադրական, բուժկանխարգելիչ հաստատությունների, հանրային սննդի ձեռնարկությունների, կրթական և նախադպրոցական հաստատությունների ներքին հարդարման ժամանակ:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կախովի համակարգի մեջ կարելի է ներկառուցել մոդուլային լուսատուներ, օդորակման և հրդեհաշիջման համակարգեր:

01 · ԿԱԽՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

GARM համակարգերի հիմնական պարամետրերը



Վրադիր միացում
մեծացնում է հավաքված համակարգի կոշտությունը:

Կոշտության կող
3,6 մ պրոֆիլի:

Ռելիեֆային դրոշմվածք
կախովի համակարգի բոլոր պրոֆիլների վրա մեծացնում է կոնստրուկցիայի կոշտությունը:

Հրդեհային կոմպենսատոր
կանխում է համակարգի փլուզումը հրդեհի ժամանակ: Հրդեհային վտանգավորության դաս՝ KM0:

Տեսանելի մաս
կախովի համակարգի (ֆլանեց):

Կողպեք
ամբողջական կտրվածքով. Standard և Premium համակարգերը միանում են միմյանց:

Տեխնիկական բնութագրեր	
Շահագործման թույլատրելի ջերմաստիճան	Մինչև +90 °C
Խոնավության թույլատրելի գոտի	Չոր, միջին
Հրդեհային վտանգավորության դաս	KM0, KM1
Շրջակա միջավայրի ագրեսիվության թույլատրելի աստիճան	Ոչ ագրեսիվ, թույլ ագրեսիվ
Երաշխիք	10 տարի (շահագործման պայմանները պահպանելու դեպքում)

ԿԱՐԵՒՈՐ Է կախովի համակարգի կմախքի վրա լրացուցիչ սարքավորումների տեղադրումը չի թույլատրվում: Լուսատուները, օդափոխությունը և այլն պետք է ունենան սեփական ամրացում առաստաղի հիմքին և բեռ չփոխանցեն կմախքին:


01 · ԿԱԽՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Standard T24


Կրողունակության ամենաբարձր ցուցանիշն իր գնային հատվածում՝ 11,11 կգ/մ²

Բաց տիպի կախովի համակարգ, ֆլանեցի լայնությունը՝ 24 մմ


GARM Standard T24 համակարգը ամենատարածված համակարգն է. առանձնանում է մոնտաժի հարմարությամբ, երկրաչափության և մետաղի հաստության օպտիմալ հարաբերակցությամբ, ուժեղացված կողպեքի շնորհիվ պրոֆիլների ամուր միացմամբ: Կիրառվում է հանքային սալերի և մետաղական կասետների մոնտաժի համար՝ միաստիճան և ուղղանկյուն եզրով, ինչպես նաև լայն ֆլանեցով եզրով:




Հիմնական ուղղորդիչ



Լայնական ուղղորդիչ 1200 մմ



Լայնական ուղղորդիչ 600 մմ



Տեխնիկական բնութագրեր			
Ֆլանեցի (տեսանելի մասի) լայնությունը, մմ	24		
Պրոֆիլի երկարությունը	3600 մմ	1200 մմ	600 մմ
Պրոֆիլի բարձրությունը	32 մմ	25 մմ	25 մմ
Նյութ	Պաշտպանիչ ծածկույթով պողպատ		
Միացման տեսակ	Վրադիր		
Ռելիեֆային դրոշմվածք	Կրկնակի՝ համակարգի բոլոր պրոֆիլների վրա		
Այրվողության դաս	Չայրվող (ՀԳ)		
Կրողունակություն (մոնտաժի սխեմա №1)	11,11 կգ/մ²		

ԿԱՐԵՒՈՐ Է կրողունակությունը նշված է մոնտաժի սխեմայի պահպանմամբ՝ հավաքված համակարգի կմախքի վրա հավասարաչափ բաշխված բեռի դեպքում:


01 · ԿԱԽՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Premium T24


Բարձրացված կրողունակություն և կոռոզիակայունություն

Բաց տիպի ցինկապատ կախովի համակարգ, ֆլանեցի լայնությունը՝ 24 մմ


GARM Premium T24 ցինկապատ համակարգը առանձնանում է բարձր ամրությամբ և կոռոզիակայունության բարձր ցուցանիշով: Կիրառվում է հանքային սալերի և մետաղական կասետների մոնտաժի համար՝ միաստիճան և ուղղանկյուն եզրով, ինչպես նաև լայն ֆլանեցով եզրով: Համակարգերը միանում են միմյանց:




Հիմնական ուղղորդիչ



Լայնական ուղղորդիչ 1200 մմ



Լայնական ուղղորդիչ 600 մմ



Տեխնիկական բնութագրեր

Ֆլանեցի (տեսանելի մասի) լայնությունը, մմ		24	
Պրոֆիլի երկարությունը	3600 մմ	1200 մմ	600 մմ
Պրոֆիլի բարձրությունը	32 մմ	25 մմ	25 մմ
Նյութ		Ցինկապատ պողպատ	
Միացման տեսակ		Վրադիր	
Ռելիեֆային դրոշմվածք		Կրկնակի՝ համակարգի բոլոր պրոֆիլների վրա	
Այրվողության դաս		Չայրվող (ՀԳ)	
Կրողունակություն (մոնտաժի սխեմա №1)		13,89 կգ/մ²	

ԿԱՐԵՒՈՐ Է կրողունակությունը նշված է մոնտաժի սխեմայի պահպանմամբ՝ հավաքված համակարգի կմախքի վրա հավասարաչափ բաշխված բեռի դեպքում:


01 · ԿԱԽՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Premium T15


Բարձրացված կրողունակություն և կոռոզիակայունություն

Բաց տիպի ցինկապատ կախովի համակարգ, ֆլանեցի լայնությունը՝ 15 մմ


GARM Premium T15 ցինկապատ համակարգը առանձնանում է բարձր ամրությամբ և կոռոզիակայունության բարձր ցուցանիշով: Կիրառվում է հանքային սալերի և նեղ ֆլանեցով եզրով (Microlook) կասետների, ինչպես նաև GL15 բջջային մետաղական առաստաղի մոնտաժի համար:



Հիմնական ուղղորդիչ



Լայնական ուղղորդիչ 1200 մմ



Լայնական ուղղորդիչ 600 մմ




Տեխնիկական բնութագրեր

Ֆլանեցի (տեսանելի մասի) լայնությունը, մմ		15	
Պրոֆիլի երկարությունը	3600 մմ	1200 մմ	600 մմ
Պրոֆիլի բարձրությունը	32 մմ	25 մմ	25 մմ
Նյութ		Ցինկապատ պողպատ	
Միացման տեսակ		Վրադիր	
Ռելիեֆային դրոշմվածք		Կրկնակի՝ համակարգի բոլոր պրոֆիլների վրա	
Այրվողության դաս		Չայրվող (ՀԳ)	
Կրողունակություն (մոնտաժի սխեմա №1)		13,89 կգ/մ²	

ԿԱՐԵՒՈՐ Է կրողունակությունը նշված է մոնտաժի սխեմայի պահպանմամբ՝ հավաքված համակարգի կմախքի վրա հավասարաչափ բաշխված բեռի դեպքում:

01 · ԿԱԽՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ


Պոլիմերային ծածկույթի տարբերակներ



Սպիտակ | Ոսկեգույն | Արծաթագույն | Քրոմ | Սև

Տպագրության մեջ գույնը կարող է տարբերվել արտադրանքի իրական գույնից:

Մոնտաժի առաջարկվող սխեմաներ



Նյութերի ծախսը 1 մ²-ի վրա


Սխեմա	3,6 մ	1,2 մ	0,6 մ	Կախիչ	Փաթեթավորում
№1	0,84	1,67	0,84	0,7 հատ	ըստ հաշվարկի
№2	1,67	—	1,67	1,4 հատ	ըստ հաշվարկի
№3	0,84	1,67	—	0,7 հատ	ըստ հաշվարկի
№4	1,67	—	0,84	1,4 հատ	ըստ հաշվարկի

ԿԱՐԵՒՈՐ Է կախովի համակարգի կմախքի վրա լրացուցիչ սարքավորումների տեղադրումը չի թույլատրվում: Լուսատուները, օդափոխությունը և այլն պետք է ունենան սեփական ամրացում առաստաղի հիմքին և բեռ չփոխանցեն կմախքին:

01 · ԿԱԽՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Մոնտաժի համար լրակազմող տարրեր


Պատի անկյունակ



Կախովի առաստաղների կոնստրուկցիայի տարր՝ ներկված ցինկապատ պողպատից, L-աձև: Ամրացվում է պարագծով ինքնապտուտակներով՝ ոչ ավելի, քան 350 մմ քայլով:

Անկյունային պարագծային պրոֆիլի միացման տարբերակներ՝ վրադրմամբ, երբ ստորինը միանում է 45° անկյան տակ, և առանց վրադրման՝ երկուսն էլ 45° անկյան տակ:

Կախիչներ



Կախովի համակարգի ամրացման տարրը պատրաստված է ցինկապատ պողպատից: Ապահովում է կախովի առաստաղի հուսալի ամրացումը և թույլ է տալիս ստեղծել լրացուցիչ միջառաստաղային տարածություն՝ կոմունիկացիաների տեղադրման և սպասարկման համար:


Ամենատարածվածը 500 մմ երկարությունն է. պատվիրատուի հետ համաձայնեցմամբ հնարավոր է պատրաստել 500-ից 3000 մմ ցանկացած երկարությամբ:

Կախովի համակարգերի փաթեթավորման նորմ

Անվանում	1 տուփ, հատ	1 տուփ	1 տուփի քաշը, կգ	1 պալետ	Գ.մ. 1 պալետում	1 պալետի քաշը, կգ	Փաթեթի չափսերը, սմ		
							Բարձրություն	Լայնություն	Երկարություն
Առաստաղային պրոֆիլ T-24 3,6 Standard	40 հատ	144 գ.մ.	18,72	84 տուփ	12096	1700	6,20	13,60	364,50
Առաստաղային պրոֆիլ T-24 1,2 Standard	104 հատ	124,8 գ.մ.	16,12	66 տուփ	8236,8	1050	12,20	18,20	123,00
Առաստաղային պրոֆիլ T-24 0,6 Standard	130 հատ	78 գ.մ.	10,14	96 տուփ	7488	965	13,00	18,20	62,30
Առաստաղային պրոֆիլ T-24 3,6 Premium	40 հատ	144 գ.մ.	31,55	84 տուփ	12096	2415	6,20	13,60	364,50
Առաստաղային պրոֆիլ T-24 1,2 Premium	104 հատ	124,8 գ.մ.	21,8	66 տուփ	8236,8	1470	12,20	18,20	123,00
Առաստաղային պրոֆիլ T-24 0,6 Premium	130 հատ	78 գ.մ.	13,9	96 տուփ	7488	1325	13,00	18,20	62,30
Առաստաղային պրոֆիլ T-15 3,6	30 հատ	108 գ.մ.	19,9	60 տուփ	6480	1225	3,60	14,40	364,50
Առաստաղային պրոֆիլ T-15 1,2	96 հատ	115,2 գ.մ.	16,1	56 տուփ	6451,2	932	8,60	14,40	123,00
Առաստաղային պրոֆիլ T-15 0,6	96 հատ	57,6 գ.մ.	8,1	120 տուփ	6912	1002	8,60	14,40	62,30
Պատի պրոֆիլ 19×19	60 հատ	180 գ.մ.	17,1	60 տուփ	12600	1310	3,60	13,60	301,00
Պատի պրոֆիլ 19×24	60 հատ	180 գ.մ.	18,72	56 տուփ	12600	1430	3,60	13,60	301,00

01 · ԿԱԽՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Կախովի համակարգի մոնտաժ



01 Նախապատրաստել միջառաստաղային տարածությունը: Ամրացնել բոլոր կոմունիկացիաները՝ թույլ չտալով, որ դրանք հենվեն կախովի առաստաղի կմախքին:

02 Խորհուրդ ենք տալիս կախովի համակարգի մոնտաժից առաջ կազմել սենքի հատակագիծ-սխեման և կախովի առաստաղի սխեման, որպեսզի առաստաղը լինի սենքի նկատմամբ սիմետրիկ:

03 Մոնտաժը պետք է սկսել սենքի պարագծով հորիզոնական մակարդակի նշումից: Բարձրությունը որոշվում է նախագծով: Մակարդակը նշելուց հետո ամբողջ սենքի պարագծով ամրացնում ենք պատի անկյունակը՝ ամեն 350 մմ-ը մեկ: Անկյունակի տեղադրման մակարդակը որոշում է կախովի առաստաղի բարձրությունը: Անկյուններում անկյունային պրոֆիլը կտրում ենք 45°-ով, իսկ ուղիղ հատվածներում անկյունակները պարզապես միացնում ենք ծայր առ ծայր՝ ամրացնելով յուրաքանչյուր ծայրը: Անկյունային պրոֆիլը պետք է կտրել մետաղի մկրատով: Անկյունային պրոֆիլն ամրացվում է նաև սենքի մյուս բոլոր կոնստրուկցիաներին, որոնց հարում է կախովի առաստաղը, օրինակ՝ սյուներին:

04 Այնուհետև կախովի համակարգի հիմնական ուղղորդիչները տեղադրում ենք կախիչների վրա: Սկսում ենք մեկ պատից: 3,6 մ երկարությամբ հիմնական պրոֆիլը մոնտաժում ենք կախիչների վրա 1200 մմ քայլով՝ պատից հեռանալով այնքան, որ կտրված պանելները լինեն սիմետրիկ: Առաջին կախիչը պետք է տեղադրվի պատից ոչ ավելի, քան 300 մմ հեռավորության վրա: Հիմնական ուղղորդիչների միացման տեղից ոչ ավելի, քան 150 մմ հեռավորության վրա տեղադրում ենք լրացուցիչ կախիչ, որն ապահովում է կմախքի լրացուցիչ կոշտություն և կրողունակության պահպանում: Կախիչների ամրացման տեղերը ծածկի վրա տեղադրվում են խստորեն հիմնական ուղղորդիչի առանցքային գծի երկայնքով: Արգելվում է կախիչների ամրացման տեղերի շեղումը հիմնական ուղղորդիչի առանցքի նկատմամբ ուղղահայաց ուղղությամբ: Թույլատրվում է կախիչների ամրացման տեղերի շեղումը հիմնական ուղղորդիչի առանցքի երկայնքով՝ 45° անկյան տակ ցանկացած կողմ:

05 Եթե սենքի երկարությունը 3,6 մետրից ավելի է, հիմնական պրոֆիլները միացնում ենք միմյանց. դրա համար ծայրերում նախատեսված է հատուկ կողպեք:

06 Պրոֆիլների միացումից հետո դրանք հարթեցվում են մեկ հարթության մեջ, որը ձևավորում է պարագծի մակարդակը: Դա արվում է այն կախիչների վեր-վար կարգավորմամբ, որոնց վրա ամրացված են 3,6 մ հիմնական ուղղորդիչները:

07 Հատակագիծ-սխեմային համապատասխան՝ 1,2 մ երկարությամբ լայնական պրոֆիլը մոնտաժում ենք 3,6 մ ուղղորդիչների կողպեքային անցքերի մեջ:

08 Այնուհետև մոնտաժում ենք 0,6 մ լայնական ուղղորդիչները՝ ուղղահայաց 1,2 մ ուղղորդիչների մեջ: Այսպիսով, ամբողջ առաստաղով պետք է ստացվեն 600×600 մմ բջիջներ: 600×600 մմ-ից տարբեր չափսի պանելներ (600×1200 մմ և այլն) օգտագործելիս պրոֆիլների մոնտաժն իրականացվում է ընտրված սխեմային համապատասխան:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Լուսատուները, ազդանշանային տվիչները, օդորակիչները և այլն, որոնք դուրս են գալիս կախովի առաստաղի դիմային մաս, պետք է ամրացվեն անկախ կախիչների վրա: Արգելվում է ամրացնել օդատարերին և այլ կոմունիկացիոն համակարգերին: Բարձր խոնավությամբ սենքերում խորհուրդ է տրվում կիրառել GARM Premium կամ T15 ցինկապատ համակարգ՝ ամբողջ մակերեսով լրացուցիչ ներկված. կախիչները նույնպես պետք է լրացուցիչ ներկված լինեն:



02 ԲԱԺԻՆ 02

Գրիլյատո դասական

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գրիլյատոն կախովի առաստաղ է, որն իրենից ներկայացնում է բջջային կոնստրուկցիա: Ցանցերը կազմվում են U-աձև «ՄԱՄԱ» և «ՊԱՊԱ» պրոֆիլներից, որոնք իրենց հերթին մոնտաժվում են U-աձև ուղղորդիչների վրա՝ 2,4 մ՝ հիմնական ուղղորդիչ «Main», 1,2 մ՝ լայնական ուղղորդիչ «Cross 1,2», 0,6 մ՝ փոքր լայնական ուղղորդիչ «Cross 0,6»:

ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

Օդանավակայաններ, երկաթուղային և ավտոկայաններ, առևտրի կենտրոններ և ցուցասրահներ, հանրային սննդի վայրեր, հյուրանոցներ, համերգասրահներ, կինոթատրոններ, բժշկական և կրթական հաստատություններ և այլն:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Դիզայներական առաստաղ՝ ձևերի և գունային լուծումների մեծ բազմազանությամբ: Կարող է պատրաստվել առևտրային սարքավորումների գույնով կամ ներկվել ընկերության կորպորատիվ գույներով: Լուսատուները կարելի է ներկառուցել, կախել կամ տեղադրել միջառաստաղային տարածությունում: Առաստաղը հարմար է մոնտաժի համար. բոլոր աշխատանքներն իրականացվում են առանց փոշու՝ մետաղի մկրատով:

02 · ԳՐԻԼՅԱՏՈ


Գրիլյատո դասական

Տեխնիկական բնութագրեր	
Նյութ	Ալյումին
Մետաղի հաստությունը	0,3–0,4 մմ
Ցանցի տիպաչափը	600×600
Պրոֆիլների բարձրությունը	30 մմ, 40 մմ, 50 մմ
Գունային տարբերակներ (պահեստում)	Սպիտակ փայլատ RAL 9003, արծաթագույն մետալիկ RAL 9006, փայլատ մետալիկ RAL 9006, գրաֆիտ RAL 7024, սև RAL 9005
Պրոֆիլի լայնությունը	10 մմ
Բջիջ	30×30, 50×50, 75×75, 100×100, 150×150, 200×200


Լրակազմ




Հիմնական պրոֆիլ 2,4 մ



Լայնական պրոֆիլ 1,2 և 0,6 մ




«ՄԱՄԱ» պրոֆիլ 0,6 մ



«ՊԱՊԱ» պրոֆիլ 0,6 մ



Միակցիչ



Անկյունային պրոֆիլ



Կախիչ


Ծախսի գործակիցը 1 մ²-ի վրա

Բջիջ	30×30	50×50	75×75	100×100	150×150	200×200
Ծախսի գործ.	66,7	40	26,7	20	13,34	10


1 մ²-ի գնի հաշվարկը՝ Գրիլյատոյի 1 գ.մ.-ի գին × բջջի գործակից:
Օրինակ՝ 1 գ.մ.-ի 10 գնի դեպքում (սպիտակ գույն, դարակի բարձրությունը՝ 40 մմ, մետաղի հաստությունը՝ 0,3 մմ). 100×100 բջիջ՝ 10 × 20 = 200 1 մ²-ի համար, 50×50 բջիջ՝ 10 × 40 = 400 1 մ²-ի համար (առանց պատի անկյունակի և կախիչի):

02 · ԳՐԻԼՅԱՏՈ

«ՄԱՄԱ» «ՊԱՊԱ» հավաքման սխեմա




2,4 մ, 1,2 մ, 0,6 մ ուղղորդիչ պրոֆիլների հավաքման սխեմա



02 · ԳՐԻԼՅԱՏՈ


«ՄԱՄԱ» «ՊԱՊԱ» պրոֆիլների ծախսը



Գրիլյատո դասական
Բջիջ 50×50

Ծախսը 600×600 մոդուլի վրա՝


- «ՄԱՄԱ» — 11 հատ
- «ՊԱՊԱ» — 11 հատ



Գրիլյատո դասական
Բջիջ 75×75

Ծախսը 600×600 մոդուլի վրա՝


- «ՄԱՄԱ» — 7 հատ
- «ՊԱՊԱ» — 7 հատ



Գրիլյատո դասական
Բջիջ 100×100

Ծախսը 600×600 մոդուլի վրա՝


- «ՄԱՄԱ» — 5 հատ
- «ՊԱՊԱ» — 5 հատ



Գրիլյատո դասական
Բջիջ 150×150

Ծախսը 600×600 մոդուլի վրա՝

- «ՄԱՄԱ» — 3 հատ
- «ՊԱՊԱ» — 3 հատ



Գրիլյատո դասական
Բջիջ 200×200

Ծախսը 600×600 մոդուլի վրա՝

- «ՄԱՄԱ» — 2 հատ
- «ՊԱՊԱ» — 2 հատ

Գրիլյատո պրոֆիլների բարձրությունը

- 50 մմ
- 40 մմ
- 30 մմ

02 · ԳՐԻԼՅԱՏՈ

Տարրերի քանակը 1 մ²-ի վրա


Արտադրատեսակ	Անվանում	30×30	50×50	75×75	100×100	150×150	200×200
Ցանց	600×600			2,78 հատ			
Ցանցում պրոֆիլների քանակը	«ՄԱՄԱ» 0,6	19 հատ / 11,4 գ.մ.	11 հատ / 6,6 գ.մ.	7 հատ / 4,2 գ.մ.	5 հատ / 3 գ.մ.	3 հատ / 1,8 գ.մ.	2 հատ / 1,2 գ.մ.
	«ՊԱՊԱ» 0,6	19 հատ / 11,4 գ.մ.	11 հատ / 6,6 գ.մ.	7 հատ / 4,2 գ.մ.	5 հատ / 3 գ.մ.	3 հատ / 1,8 գ.մ.	2 հատ / 1,2 գ.մ.
Կրող ուղղորդիչներ Main	Կրող ուղղ. 2,4		0,7 հատ / 1,67 գ.մ.			0,35 հատ / 0,84 գ.մ.	
	Լայնական ուղղ. 1,2		չի օգտագործվում			1,39 հատ / 1,67 գ.մ.	
	Լայնական ուղղ. 0,6		2,78 հատ / 1,67 գ.մ.			1,39 հատ / 0,84 գ.մ.	
	Միակցիչ		0,7 հատ			0,35 հատ	
	Կախիչ		1,85 հատ			0,93 հատ	
	Պատի անկյունակ		ըստ հաշվարկի				

Փաթեթավորման նորմ

Գրիլյատո	Պրոֆիլի բարձրությունը, մմ	Փաթեթի չափսերը	Հատ փաթեթում	Հատ պալետում	Գ.մ. փաթեթում	Գ.մ. պալետում
Գրիլյատո «ՄԱՄԱ» 600 մմ	30	618×225×215	280	8960	168	5376
Գրիլյատո «ՊԱՊԱ» 600 մմ	30	618×225×215	280	8960	168	5376
Ուղղորդիչ 600 մմ	30	618×225×215	280	8960	168	5376
Ուղղորդիչ 1200 մմ	30	1218×225×215	280	7000	336	8400
Ուղղորդիչ 2400 մմ	30	2418×225×215	280	3360	672	8064
Գրիլյատո «ՄԱՄԱ» 600 մմ	40	618×225×215	200	6400	120	3840
Գրիլյատո «ՊԱՊԱ» 600 մմ	40	618×225×215	200	6400	120	3840
Ուղղորդիչ 600 մմ	40	618×225×215	200	6400	120	3840
Ուղղորդիչ 1200 մմ	40	1218×225×215	200	5000	240	6000
Ուղղորդիչ 2400 մմ	40	2418×225×215	200	2400	480	5760
Գրիլյատո «ՄԱՄԱ» 600 մմ	50	618×225×215	160	5120	96	3072
Գրիլյատո «ՊԱՊԱ» 600 մմ	50	618×225×215	160	5120	96	3072
Ուղղորդիչ 600 մմ	50	618×225×215	160	5120	96	3072
Ուղղորդիչ 1200 մմ	50	1218×225×215	160	4000	192	4800
Ուղղորդիչ 2400 մմ	50	2418×225×215	160	1920	384	4608

02 · ԳՐԻԼՅԱՏՈՒ

Գրիլյատոյի մոնտաժի սխեմա



01 Նախապատրաստել միջառաստաղային տարածությունը: Ամրացնել բոլոր կոմունիկացիաները՝ թույլ չտալով, որ դրանք հենվեն կախովի առաստաղի կմախքին:

02 Խորհուրդ ենք տալիս կախովի համակարգի մոնտաժից առաջ կազմել սենքի հատակագիծ-սխեման և կախովի առաստաղի սխեման, որպեսզի առաստաղը լինի սենքի նկատմամբ սիմետրիկ:

03 Մոնտաժը պետք է սկսել սենքի պարագծով հորիզոնական մակարդակի նշումից: Բարձրությունը որոշվում է նախագծով: Մակարդակը նշելուց հետո ամբողջ սենքի պարագծով ամրացնում ենք պատի անկյունակը՝ ամեն 350 մմ-ը մեկ: Անկյունակի տեղադրման մակարդակը որոշում է կախովի առաստաղի բարձրությունը: Անկյուններում անկյունային պրոֆիլը կտրում ենք 45°-ով, իսկ ուղիղ հատվածներում անկյունակները պարզապես միացնում ենք ծայր առ ծայր՝ ամրացնելով յուրաքանչյուր ծայրը: Անկյունային պրոֆիլը պետք է կտրել մետաղի մկրատով: Անկյունային պրոֆիլն ամրացվում է նաև սենքի մյուս բոլոր կոնստրուկցիաներին, որոնց հարում է կախովի առաստաղը, օրինակ՝ սյուներին:

04 Այնուհետև 2,4 մ հիմնական ուղղորդիչները տեղադրում ենք կախիչների վրա: Սկսում ենք մեկ պատից: 2,4 մ երկարությամբ հիմնական պրոֆիլը մոնտաժում ենք կախիչների վրա 1000–1200 մմ քայլով՝ պատից հեռանալով այնքան, որ կտրված ցանցերը լինեն սիմետրիկ: Առաջին կախիչը պետք է տեղադրվի պատից ոչ ավելի, քան 300 մմ հեռավորության վրա: Հիմնական ուղղորդիչների միացման տեղից ոչ ավելի, քան 150 մմ հեռավորության վրա տեղադրում ենք լրացուցիչ կախիչ, որն ապահովում է կմախքի լրացուցիչ կոշտություն և կրողունակության պահպանում: Կախիչների ամրացման տեղերը ծածկի վրա տեղադրվում են խստորեն հիմնական ուղղորդիչի առանցքային գծի երկայնքով: Արգելվում է կախիչների ամրացման տեղերի շեղումը հիմնական ուղղորդիչի առանցքի նկատմամբ ուղղահայաց ուղղությամբ: Թույլատրվում է կախիչների ամրացման տեղերի շեղումը հիմնական ուղղորդիչի առանցքի երկայնքով՝ 45° անկյան տակ ցանկացած կողմ:

05 Եթե սենքի երկարությունը 2,4 մ-ից ավելի է, հիմնական պրոֆիլները միացնում ենք ծայր առ ծայր՝ օգտագործելով Գրիլյատոյի միակցիչը: Միացման տեղերը լրացուցիչ ամրացնում ենք կախիչներով:

06 Պրոֆիլների միացումից հետո դրանք հարթեցվում են մեկ հարթության մեջ, որը ձևավորում է պարագծի մակարդակը: Դա արվում է այն կախիչների վեր-վար կարգավորմամբ, որոնց վրա ամրացված են 2,4 մ հիմնական ուղղորդիչները:

07 Հատակագիծ-սխեմային համապատասխան՝ 1,2 մ երկարությամբ լայնական պրոֆիլը մոնտաժում ենք հիմնական պրոֆիլին ուղղահայաց՝ 1200 մմ քայլով:

08 Այնուհետև մոնտաժում ենք 0,6 մ լայնական ուղղորդիչները՝ տեղադրելով դրանք ուղղահայաց 1,2 մ ուղղորդիչների մեջ: Այսպիսով, ամբողջ առաստաղով պետք է ստացվեն 600×600 մմ բջիջներ:

09 Այնուհետև անցնում ենք «ՄԱՄԱ» և «ՊԱՊԱ» պրոֆիլներից բաղկացած ցանցի հավաքմանը՝ միացնելով դրանք միմյանց ուղղահայաց: Ցանցերի հավաքումից հետո դրանցով լցնում ենք կմախքը՝ տեղ թողնելով լուսատուների համար:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Լուսատուները, ազդանշանային տվիչները, օդորակիչները և այլն, որոնք դուրս են գալիս կախովի առաստաղի դիմային մաս, պետք է ամրացվեն անկախ կախիչների վրա: Արգելվում է ամրացնել օդատարերին և այլ կոմունիկացիոն համակարգերին:



ԲԱԺԻՆ 03

03 Գրիլյատո GL15

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գրիլյատո GL15-ը կասետային տիպի բջջային առաստաղ է՝ 600×600 մմ ցանցի չափսով, որը բաղկացած է 15 մմ հիմքի լայնությամբ U-աձև «ՄԱՄԱ» և «ՊԱՊԱ» պրոֆիլներից: Պարագծով ցանցը եզրավորված է L-աձև պրոֆիլով: Յուրաքանչյուր առանձին ցանց մոնտաժվում է T15 Premium կախովի համակարգի կմախքի մեջ:

ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

Օդանավակայաններ, երկաթուղային և ավտոկայաններ, առևտրի կենտրոններ և ցուցասրահներ, հանրային սննդի վայրեր, հյուրանոցներ, համերգասրահներ, կինոթատրոններ, բժշկական և կրթական հաստատություններ և այլն:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Գրիլյատո GL15-ը համատեղում է T15 Premium կմախքի և դասական Գրիլյատոյի հիմնական առավելությունները: Մոնտաժի թեթևությունն ու արագությունը թույլ են տալիս ապամոնտաժել և կրկին մոնտաժել առանձին բջիջները՝ առանց կոնստրուկցիայի ամբողջականությունը խախտելու, և ապահովում են հարմար մուտք միջառաստաղային տարածություն:

03 · ԳՐԻԼՅԱՏՈ GL15

Գրիլյատո GL15

Տեխնիկական բնութագրեր	
Նյութ	Ալյումին 0,3–0,4 մմ; ցինկապատ պողպատ 0,25–0,3 մմ
Լրակազմ	GL15 ցանց («ՄԱՄԱ», «ՊԱՊԱ», L-պրոֆիլ), կմախք՝ T15 Premium
GL15 ցանցի տիպաչափը, մմ	600×600
Պրոֆիլների բարձրությունը, մմ	37 մմ, 47 մմ
Գունային տարբերակներ (պահեստում)	Սպիտակ փայլատ RAL 9003, արծաթագույն մետալիկ RAL 9006, փայլատ մետալիկ RAL 9006, գրաֆիտ RAL 7024, սև RAL 9005
Հիմքի լայնությունը, մմ	15 մմ
Բջիջ, մմ	50×50; 60×60; 75×75; 86×86; 100×100; 120×120; 150×150; 200×200

Լրակազմ



«ՊԱՊԱ» պրոֆիլ GL15 — «ՄԱՄԱ» պրոֆիլ GL15 — Եզրավորող L-պրոֆիլ — Կախիչ



Պրոֆիլ 3,6 T15 — Պրոֆիլ 1,2 T15 — Պրոֆիլ 0,6 T15 — Անկյունային պրոֆիլ


Ծախսի գործակիցը 1 մ²-ի վրա

Բջիջ	50×50	60×60	75×75	86×86	100×100	120×120	150×150	200×200
Ծախսի գործ.	43,34	36,68	30,02	26,68	23,34	20,02	16,68	13,34

03 · ԳՐԻԼՅԱՏՈ GL15


GL15 կասետի մոնտաժ

2 L-աձև ուղղորդիչների GL T15 (600 մմ) ամրացում




Գրիլյատո «ՄԱՄԱ» (600 մմ) ամրացում Գրիլյատո «ՊԱՊԱ»-ին (600 մմ)

Չորս L-աձև GL T15 (600 մմ) ուղղորդիչ՝ հավաքված




Գրիլյատո «ՄԱՄԱ» (600 մմ), Գրիլյատո «ՊԱՊԱ» (600 մմ) և L-աձև ուղղորդիչ GL T15՝ հավաքված



03 · ԳՐԻԼՅԱՏՈ GL15

«ՄԱՄԱ» «ՊԱՊԱ» «L-պրոֆիլ» պրոֆիլների ծախսը




Գրիլյատո GL15

Բջիջ 50×50

Ծախսը 600×600 մոդուլի վրա՝

- «ՄԱՄԱ» — 11 հատ
- «ՊԱՊԱ» — 11 հատ
- L-ուղղորդիչ — 4 հատ




Գրիլյատո GL15

Բջիջ 75×75

Ծախսը 600×600 մոդուլի վրա՝

- «ՄԱՄԱ» — 7 հատ
- «ՊԱՊԱ» — 7 հատ
- L-ուղղորդիչ — 4 հատ




Գրիլյատո GL15

Բջիջ 100×100

Ծախսը 600×600 մոդուլի վրա՝

- «ՄԱՄԱ» — 5 հատ
- «ՊԱՊԱ» — 5 հատ
- L-ուղղորդիչ — 4 հատ




Գրիլյատո GL15

Բջիջ 150×150

Ծախսը 600×600 մոդուլի վրա՝

- «ՄԱՄԱ» — 3 հատ
- «ՊԱՊԱ» — 3 հատ
- L-ուղղորդիչ — 4 հատ



Գրիլյատո GL15

Բջիջ 200×200

Ծախսը 600×600 մոդուլի վրա՝

- «ՄԱՄԱ» — 2 հատ
- «ՊԱՊԱ» — 2 հատ
- L-ուղղորդիչ — 4 հատ

Գրիլյատո GL15 պրոֆիլների բարձրությունը

- 50 մմ
- 40 մմ

03 · ԳՐԻԼՅԱՏՈ GL15

Տարրերի քանակը 1 մ²-ի վրա


Անվանում	Տեսակ	Մոդուլ, մմ	Չափ. միավոր	Ծախսը 1 մ²-ի վրա							
				50×50	60×60	75×75	86×86	100×100	120×120	150×150	200×200
Ցանց	GL15	600×600	հատ	2,78	2,78	2,78	2,78	2,78	2,78	2,78	2,78
Ցանցում պրոֆիլների քանակը	ՄԱՄԱ	600	հատ	11	9	7	6	5	4	3	2
	ՊԱՊԱ	600	հատ	11	9	7	6	5	4	3	2
	L-պրոֆիլ	600	հատ	4	4	4	4	4	4	4	4
T15 Premium կախովի համակարգ	Կրող պրոֆ.	3600	գ.մ.	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84
	Լայնական պրոֆ.	1200	գ.մ.	1,67	1,67	1,67	1,67	1,67	1,67	1,67	1,67
	Լայնական պրոֆ.	600	գ.մ.	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84
Կախիչ	Եվրոկախիչ		գ.մ.	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84
Պատի անկյունակ	PL 19×19 PL 19×24	3000	գ.մ.	ըստ հաշվարկի							

Փաթեթավորման նորմ

Գրիլյատո GL15	Պրոֆիլի բարձրությունը, մմ	Փաթեթի չափսերը	Հատ փաթեթում	Հատ պալետում	Գ.մ. փաթեթում	Գ.մ. պալետում
«ՄԱՄԱ» 600 մմ	37	618×225×215	140	4480	84	2688
«ՊԱՊԱ» 600 մմ	37	618×225×215	140	4480	84	2688
L-պրոֆիլ 600 մմ	37	630×145×85	540	12960	324	7776
«ՄԱՄԱ» 600 մմ	47	618×225×215	112	3584	67,2	2150,4
«ՊԱՊԱ» 600 մմ	47	618×225×215	112	3584	67,2	2150,4
L-պրոֆիլ 600 մմ	47	630×145×85	360	8640	216	5184

03 · ԳՐԻԼՅԱՏՈ GL15

Գրիլյատո GL15-ի մոնտաժի սխեմա



01 Նախապատրաստել միջառաստաղային տարածությունը: Ամրացնել բոլոր կոմունիկացիաները՝ թույլ չտալով, որ դրանք հենվեն կախովի առաստաղի կմախքին:

02 Խորհուրդ ենք տալիս կախովի համակարգի մոնտաժից առաջ կազմել սենքի հատակագիծ-սխեման և կախովի առաստաղի սխեման, որպեսզի առաստաղը լինի սենքի նկատմամբ սիմետրիկ:

03 Մոնտաժը պետք է սկսել սենքի պարագծով հորիզոնական մակարդակի նշումից: Բարձրությունը որոշվում է նախագծով: Մակարդակը նշելուց հետո ամբողջ սենքի պարագծով ամրացնում ենք պատի անկյունակը՝ ամեն 350 մմ-ը մեկ: Անկյունակի տեղադրման մակարդակը որոշում է կախովի առաստաղի բարձրությունը: Անկյուններում անկյունային պրոֆիլը կտրում ենք 45°-ով, իսկ ուղիղ հատվածներում անկյունակները պարզապես միացնում ենք ծայր առ ծայր՝ ամրացնելով յուրաքանչյուր ծայրը: Անկյունային պրոֆիլը պետք է կտրել մետաղի մկրատով: Անկյունային պրոֆիլն ամրացվում է նաև սենքի մյուս բոլոր կոնստրուկցիաներին, որոնց հարում է կախովի առաստաղը, օրինակ՝ սյուներին:

04 Այնուհետև T15 Premium կախովի համակարգի հիմնական ուղղորդիչները տեղադրում ենք կախիչների վրա: Սկսում ենք մեկ պատից: 3,6 մ երկարությամբ հիմնական պրոֆիլը մոնտաժում ենք կախիչների վրա 1200 մմ քայլով՝ պատից հեռանալով այնքան, որ կտրված պանելները լինեն սիմետրիկ: Առաջին կախիչը պետք է տեղադրվի ոչ ավելի, քան 300 մմ հեռավորության վրա: Հիմնական ուղղորդիչների միացման տեղից ոչ ավելի, քան 150 մմ հեռավորության վրա տեղադրում ենք լրացուցիչ կախիչ, որն ապահովում է կմախքի լրացուցիչ կոշտություն և կրողունակության պահպանում: Կախիչների ամրացման տեղերը ծածկի վրա տեղադրվում են խստորեն հիմնական ուղղորդիչի առանցքային գծի երկայնքով: Արգելվում է կախիչների ամրացման տեղերի շեղումը հիմնական ուղղորդիչի առանցքի նկատմամբ ուղղահայաց ուղղությամբ: Թույլատրվում է կախիչների ամրացման տեղերի շեղումը հիմնական ուղղորդիչի առանցքի երկայնքով՝ 45° անկյան տակ ցանկացած կողմ:

05 Եթե սենքի երկարությունը 3,6 մետրից ավելի է, հիմնական պրոֆիլները միացնում ենք միմյանց. դրա համար ծայրերում նախատեսված է հատուկ կողպեք:

06 Պրոֆիլների միացումից հետո դրանք հարթեցվում են մեկ հարթության մեջ, որը ձևավորում է պարագծի մակարդակը: Դա արվում է այն կախիչների վեր-վար կարգավորմամբ, որոնց վրա ամրացված են 3,6 մ հիմնական ուղղորդիչները:

07 Հատակագիծ-սխեմային համապատասխան՝ 1,2 մ երկարությամբ T15 Premium լայնական պրոֆիլը մոնտաժում ենք 3,6 մ ուղղորդիչների կողպեքային անցքերի մեջ:

08 Այնուհետև մոնտաժում ենք 0,6 մ լայնական ուղղորդիչները՝ տեղադրելով դրանք ուղղահայաց 1,2 մ ուղղորդիչների մեջ: Այսպիսով, ամբողջ առաստաղով պետք է ստացվեն 600×600 մմ բջիջներ:

09 Այնուհետև անցնում ենք «ՄԱՄԱ» և «ՊԱՊԱ» պրոֆիլներից բաղկացած ցանցի հավաքմանը՝ միացնելով դրանք միմյանց ուղղահայաց: Ցանցերի հավաքումից հետո պարագծով մոնտաժում ենք L-պրոֆիլը՝ յուրաքանչյուր կողմում մեկական, և ցանցերով լցնում ենք կմախքը՝ տեղ թողնելով լուսատուների համար:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Լուսատուները, ազդանշանային տվիչները, օդորակիչները և այլն, որոնք դուրս են գալիս կախովի առաստաղի դիմային մաս, պետք է ամրացվեն անկախ կախիչների վրա: Արգելվում է ամրացնել օդատարերին և այլ կոմունիկացիոն համակարգերին:



04 ԲԱԺԻՆ 04

Բաց տիպի կասետ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մոնտաժվում է T24 բաց տիպի կախովի համակարգի վրա: Արտադրվում է եզրի երեք տեսակով՝ Line, Tegular 45 աստիճան, Tegular 90 աստիճան: Կասետների մակերեսը կարող է լինել ինչպես հարթ, այնպես էլ պերֆորացված՝ ակուստիկ բնութագրերը բարելավելու համար:

ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

Մանկական և կրթական հաստատություններ, գրասենյակային տարածքներ, ցածրահարկ և բազմահարկ շենքեր, բուժկանխարգելիչ հաստատություններ, հանրային սննդի ձեռնարկություններ:


ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրակայունություն, երկարակեցություն, հիգիենիկություն, կոռոզիակայունություն: Կասետները պատրաստվում են ալյումինից, ինչը թույլ է տալիս դրանք օգտագործել բարձր խոնավությամբ վայրերում: Պերֆորացիայի հնարավորությունը մեծացնում է ձայնակլանման գործակիցը:

04 · ԲԱՑ ՏԻՊԻ ԿԱՍԵՏ

Տեղեկատու աղյուսակ


Եզրի տեսակ	Լրակազմ		Նյութ		Պերֆորացիա	Ծախսը 1 մ²-ի վրա
			Al	Zn		
Line	Պանել	GARM Line	0,3–0,5 մմ	0,3–0,4 մմ	1,8 մմ	2,78 հատ
	Կախովի համակարգ	T24		0,18–0,25 մմ		
	Կախիչ	Եվրոկախիչ		0,3 մմ		
	Անկյունակ	PL		0,3 մմ		
K45	Պանել	GARM K45	0,3–0,5 մմ	0,3–0,4 մմ	1,8 մմ	2,78 հատ
	Կախովի համակարգ	T24		0,18–0,25 մմ		
	Կախիչ	Եվրոկախիչ		0,3 մմ		
	Անկյունակ	PL, PLL		0,3 մմ		
K90	Պանել	GARM K90	0,3–0,5 մմ	0,3–0,4 մմ	1,8 մմ	2,78 հատ
	Կախովի համակարգ	T24		0,18–0,25 մմ		
	Կախիչ	Եվրոկախիչ		0,3 մմ		
	Անկյունակ	PL, PLL		0,3 մմ		




GARM Line կասետ	
Եզրի տեսակ	Line
Հաստությունը, մմ	0,32
Տիպաչափը, մմ	600×600
Գույն	Սպիտակ փայլատ RAL 9003, արծաթագույն մետալիկ RAL 9006, փայլատ մետալիկ RAL 9006, գրաֆիտ RAL 7024, սև RAL 9005
Կախովի համակարգի տեսակ	T24 բաց կախովի համակարգ
Քաշ	0,97 կգ/մ²
Խոնավակայունություն	100%
Հրդեհային վտանգավորության դաս	ՀԳ, KM1
Պերֆորացիա	1,8 մմ
Փաթեթավորման նորմ	36 հատ/փաթեթ, 864 հատ/պալետ

04 · ԲԱՑ ՏԻՊԻ ԿԱՍԵՏ

GARM K45 և GARM K90 կասետներ




GARM K45 կասետ	
Եզրի տեսակ	K45
Հաստությունը, մմ	0,32
Տիպաչափը, մմ	600×600
Գույն	Սպիտակ փայլատ RAL 9003, արծաթագույն մետալիկ RAL 9006, փայլատ մետալիկ RAL 9006, գրաֆիտ RAL 7024, սև RAL 9005
Կախովի համակարգի տեսակ	T24 բաց կախովի համակարգ
Քաշ	0,97 կգ/մ²
Խոնավակայունություն	100%
Հրդեհային վտանգավորության դաս	ՀԳ, KM1
Պերֆորացիա	1,8 մմ
Փաթեթավորման նորմ	40 հատ/փաթեթ, 1200 հատ/պալետ



GARM K90 կասետ	
Եզրի տեսակ	K90
Հաստությունը, մմ	0,32
Տիպաչափը, մմ	600×600
Գույն	Սպիտակ փայլատ RAL 9003, արծաթագույն մետալիկ RAL 9006, փայլատ մետալիկ RAL 9006, գրաֆիտ RAL 7024, սև RAL 9005
Կախովի համակարգի տեսակ	T24 բաց կախովի համակարգ
Քաշ	0,97 կգ/մ²
Խոնավակայունություն	100%
Հրդեհային վտանգավորության դաս	ՀԳ, KM1
Պերֆորացիա	1,8 մմ
Փաթեթավորման նորմ	40 հատ/փաթեթ, 1200 հատ/պալետ

04 · ԲԱՑ ՏԻՊԻ ԿԱՍԵՏ

Եզրերի տեսակներ




K90՝ 90° աստիճանով եզր

K45՝ 45° աստիճանով եզր


Line՝ համակարգի հետ
մեկ մակարդակի եզր

Պերֆորացիա



Պերֆորացիա Ø 1,8 մմ: Չափերը նշված են միլիմետրերով:

Մոնտաժային սխեմա





ԲԱԺԻՆ 05

05 Փակ ամրացման տիպի կասետ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Փակ կախովի համակարգով կասետային առաստաղը կիրառվում է այն դեպքերում, երբ սենքի ինտերիերին ներկայացվում է մոնոլիտ առաստաղային կոնստրուկցիա ստեղծելու պահանջ: «Ստրինգեր» կրող պրոֆիլը, որին ամրացվում են մետաղական կասետները, հավաքումից հետո մնում է անտեսանելի: Կրող ուղղորդիչը մոնտաժվում է 600 մմ քայլով:

ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

Օդանավակայաններ, երկաթուղային և ավտոկայաններ, առևտրի կենտրոններ և ցուցասրահներ, հանրային սննդի վայրեր, հյուրանոցներ, բժշկական և կրթական հաստատություններ:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կասետների ավելի հուսալի և կոշտ ամրացում՝ բաց համակարգով կասետների համեմատ: Դիմանում է քամու բեռներին: Ապահովում է հեշտ մոնտաժ/ապամոնտաժ, ինչն իր հերթին հեշտացնում է մուտքը միջառաստաղային տարածություն:

05 · ՓԱԿ ՏԻՊԻ ԿԱՍԵՏ

Բնութագրեր

Բնութագրեր	
Պատրաստման նյութը	Կասետ՝ Al 0,4–0,5 մմ; Zn 0,3–0,5 մմ; Ստրինգեր՝ Zn — 0,5 մմ
Կասետի եզրը	K90
Պերֆորացիա	2,5 մմ
Տիպաչափ	Ստրինգեր L = 4 մ; կասետ 600×600 մմ
Հրդեհային անվտանգության դաս	ՀԳ, ԿՄ1
Խոնավության գոտի	Չոր, նորմալ, խոնավ
Քանակը փաթեթում	Ստրինգեր — 10 հատ/40 գ.մ.; K90 կասետ — 14 հատ


Տարրերի քանակը 1 մ²-ի վրա

№	Անվանում	Տիպաչափ	Քանակը 1 մ²-ի վրա
1	Ստրինգեր 3C	L = 4000 մմ	1,67 գ.մ.
2	Կասետ 3C K90	600×600 մմ	2,78 հատ
3	Եվրոկախիչ	L = 500–3000 մմ	1,67 հատ
4	Պատի անկյունակ	19, 24×3000 մմ	ըստ հաշվարկի
5	Խարսխային կախիչ		1,67 հատ
6	Պրոֆիլ ՊՊ 60×27	L = 3000 մմ	1 գ.մ.
7	Պրոֆիլ ՊՊ 27×28		ըստ հաշվարկի
8	Երկմակարդակ միակցիչ		1,67 հատ
9	ՊՊ պրոֆիլի երկարացուցիչ		= ՊՊ 60×27-ի քանակին

05 · ՓԱԿ ՏԻՊԻ ԿԱՍԵՏ

Լրակազմ


Ստրինգեր



Պատի անկյունակ




Կասետ 3C K90



Կախիչ




Ստրինգերի պահիչ




Երկմակարդակ միակցիչ

Ստրինգերի և կասետի մոնտաժ


Մետաղական K90 տիպ 2 կասետի ամրացում Stringer հիմնական ուղղորդիչին




K90 տիպ 2 երկու մետաղական կասետի ամրացում Stringer հիմնական ուղղորդիչին



K90 տիպ 2 մետաղական կասետ և Stringer հիմնական ուղղորդիչ r




K90 տիպ 2 երկու մետաղական կասետ և Stringer հիմնական ուղղորդիչ




05 · ՓԱԿ ՏԻՊԻ ԿԱՍԵՏ

Փակ համակարգով կասետային առաստաղի մոնտաժի պարզ սխեմա



05 · ՓԱԿ ՏԻՊԻ ԿԱՍԵՏ


Փակ համակարգով կասետային առաստաղի մոնտաժի ուժեղացված սխեմա



05 · ՓԱԿ ՏԻՊԻ ԿԱՍԵՏ


Ուժեղացված սխեմա՝ ամրացման հանգույցներ

Կախիչի ամրացում Պ60×27 առաստաղային պրոֆիլին



3C կասետների ստրինգերի պահիչի ամրացում Պ60×27 առաստաղային պրոֆիլին

3C կասետների ստրինգերի պահիչի և Պ60×27 առաստաղային պրոֆիլի ամրացում Stringer հիմնական ուղղորդիչին



3C կասետների ստրինգերի պահիչ, Պ60×27 առաստաղային պրոֆիլ և Stringer հիմնական ուղղորդիչ՝ հավաքված



ԲԱԺԻՆ 06

06 Խորանարդաձև առաստաղ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խորանարդաձև առաստաղը համատեղում է լակոնիկությունն ու մինիմալիզմը և միաժամանակ ֆունկցիոնալ ու նորարարական կախովի համակարգ է: Այն իրենից ներկայացնում է ուղղանկյուն կամ քառակուսի կտրվածքով ռեյկայի պրոֆիլ՝ 3000 և 4000 մմ երկարությամբ: Ռեյկայի ուղղանկյուն ձևի շնորհիվ առաստաղն անվանում են «խորանարդաձև ռեյկա», «կուբոտա», «խորանարդային ռեյկա» և այլն:

ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

Օդանավակայաններ, երկաթուղային և ավտոկայաններ, առևտրի կենտրոններ և ցուցասրահներ, հանրային սննդի վայրեր, հյուրանոցներ, համերգասրահներ, կինոթատրոններ, բժշկական և կրթական հաստատություններ և այլն:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Ուղղանկյուն կտրվածքով ռեյկայի յուրահատուկ արտաքին տեսքը լակոնիկ և ինքնատիպ է. առաստաղը ստանում է լրացուցիչ ծավալ և «սավառնող առաստաղի» էֆեկտ: Մոնտաժի պարզություն և արագություն, խոնավակայունություն և բարձր հրակայունություն:

06 · ԽՈՐԱՆԱՐԴԱՁԵՒ ԱՌԱՍՏԱՂ


Խորանարդաձև առաստաղ

Տեխնիկական բնութագրեր	
Նյութ	Ալյումին 0,3–0,4 մմ; ցինկապատ պողպատ 0,3–0,4 մմ
Սանրի նյութը	Ցինկապատ պողպատ 0,5 մմ; ցինկապատ պողպատ 0,5 մմ, փոշեներկ RAL 9005
Ռեյկայի երկարությունը, մմ	Ստանդարտ երկարություն՝ 3000, 4000 մմ
Սանրի երկարությունը, մմ	Ստանդարտ երկարություն՝ 3000, 4000 մմ
Սանրի քայլը, մմ	Ստանդարտ քայլ՝ 25, 30, 50, 80
Շահագործում	Ոչ բարձր, քան +90 °C

Լրակազմ



C-դիզայն ռեյկա «Կուբոտա»



Միակցիչ տարր




Ծայրային խցան «ներքին»




Կրող ուղղորդիչ՝ սանր


Տիպաչափ



39/60/80/100/160



50/70/90/150




50/75/100/135

Ռեյկայի լայնությունը՝ 30 / 50 / 80 մմ; աջ կողմի արժեքները՝ ռեյկայի բարձրությունը, մմ:

06 · ԽՈՐԱՆԱՐԴԱՁԵՒ ԱՌԱՍՏԱՂ

Նկարագրություն



A — ռեյկայի լայնություն
B — քայլ
C — մոդուլ (ռեյկայի լայնություն + քայլ)
H — ռեյկայի բարձրությունը սանրով
H1 — սանրի բարձրություն

Սլոթ (ռեյկայի նստատեղ)՝ 30 մմ, 50 մմ, 80 մմ:
B — ստանդարտ քայլ՝ 25, 30, 50, 80 մմ (հնարավոր է պատրաստել սանր 5 մմ-ի բազմապատիկ քայլով)

Ռեյկայի լայնությունը A, մմ	30					50				80			
Ռեյկայի բարձրությունը, մմ	39	60	80	100	160	50	70	90	150	55	75	100	135
Բարձրությունը (ռեյկա + սանր) H, մմ	70	91	111	131	191	81	101	121	181	86	106	131	166
Սանրի բարձրությունը H1, մմ	40												

Պոլիմերային ծածկույթի տարբերակներ



Սպիտակ 9003	Սև 9005	Մետալիկ 9006	Մուգ ընկույզ	Կաղնի	Գրաֆիտ 7024	Փոշեներկ ցանկացած RAL գույնով


Տպագրության մեջ գույնը կարող է տարբերվել արտադրանքի իրական գույնից:

06 · ԽՈՐԱՆԱՐԴԱՁԵՒ ԱՌԱՍՏԱՂ

Տարրերի քանակը 1 մ²-ի վրա

Ռեյկայի լայնությունը A, մմ		30				50			80		
Քայլ, մմ		25	30	50	80	30	50	80	30	50	80
Մոդուլ (ռեյկայի լայնություն + քայլ), մմ		55	60	80	110	80	100	130	110	130	160
Ծախսը 1 մ²-ի վրա	Ռեյկա, գ.մ./մ²	18,18	16,67	12,50	9,09	12,50	10,00	7,69	9,09	7,69	6,25
	Սանր, գ.մ./մ²	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84
	Կախիչ, հատ/մ²	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84	0,84
	Միակցիչ, հատ/մ²	ըստ հաշվարկի									
	Խցան, հատ/մ²	ըստ հաշվարկի									
	Պատի անկյունակ 19×24, գ.մ./մ²	ըստ հաշվարկի									

Մոնտաժի սխեմա



07 · ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ ԵՒ ԼՈԳԻՍՏԻԿԱ

Արտադրանքի փաթեթավորման նորմ

Բաց ամրացման տիպի կասետ	Քանակը փաթեթում			Փաթեթի չափսը, մմ
	Հատ	Բլոկ, հատ	Փաթեթ, կգ	Երկարություն × լայնություն × բարձրություն
GARM Line (թաղանթ)	36	864	11,2	612×202×600
GARM Line (թուղթ)	36	864	11,2	612×202×600
GARM K45 (թաղանթ)	40	1200	12,5	612×150×600
GARM K45 (թուղթ)	40	1200	12,5	612×150×600
GARM K90 (թաղանթ)	40	1200	12,5	612×150×600
GARM K90 (թուղթ)	40	1200	12,5	612×150×600
GARM Line պերֆորացիա (թուղթ)	36	864	11,2	612×202×600
GARM K45 պերֆորացիա (թուղթ)	36	1080	11,2	612×150×600
GARM K90 պերֆորացիա (թուղթ)	36	1080	11,2	612×150×601

Փակ ամրացման տիպի կասետ	Քանակը փաթեթում		Փաթեթի չափսը, մմ
	Հատ	Բլոկ, հատ	Երկարություն × լայնություն × բարձրություն
Ստրինգեր 3C 4000 մմ	10	600	կապոց (առանց ծալքաստվարաթղթե տուփի)
Կասետ 3C K90 600×600 մմ	14	420	612×202×600

Կախովի համակարգերի, Գրիլյատոյի և Գրիլյատո GL15-ի փաթեթավորման նորմերը ներկայացված են կատալոգի համապատասխան բաժիններում:

Տեղափոխում և պահեստավորում

Տեղափոխում

- Կախովի առաստաղները տեղափոխվում են բոլոր տեսակի տրանսպորտով՝ ծածկված տրանսպորտային միջոցներում՝ տվյալ տրանսպորտի տեսակի համար գործող բեռնափոխադրման կանոններին համապատասխան: Առաստաղների բեռնումը, տեղադրումը և ամրացումը տրանսպորտային միջոցներում պետք է իրականացնել տարա-կտորային բեռների բեռնման և տեղադրման կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան:
- Առաստաղները տրանսպորտային միջոցներում բեռնելիս տրանսպորտի ներսում դուրս ցցված մասերը և կոնստրուկցիաները, կողային օդափոխման լյուկերը, չհանվող սարքավորումները, դռան բացվածքի ուղղահայաց հենակները պետք է պաշտպանված լինեն ԳՕՍՏ 8273-ին համապատասխան փաթաթման թղթի մի քանի շերտով կամ ցանկացած տեսակի ոչ կոնդիցիոն ստվարաթղթով, ինչպես նաև այլ նյութերով, որոնք հուսալիորեն պաշտպանում են արտադրանքը վնասվածքից:
- Եթե տեղափոխման ժամանակ արտադրանքով պալետների տեղաշարժը կարող է վնասել արտադրանքը, անհրաժեշտ է ապահովել պալետների ամրացում և ամորտիզացիոն նյութերի կիրառում:

Պահեստավորում

- Կախովի առաստաղները պետք է պահել մթնոլորտային տեղումներից և հողի խոնավությունից պաշտպանված փակ պահեստներում՝ նորմատիվ փաստաթղթերի և տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
- Կախովի առաստաղները պահելիս անհրաժեշտ է ապահովել՝ ա) սպառողական հատկությունների պահպանումը; բ) աշխատանքի անվտանգ մեթոդները:
- Մեկ տեսակի և տեսականու արտադրանքը դարսվում է կույտերով: ԳՕՍՏ 12.3.010-ի համաձայն արտադրանքի պահեստավորումը կույտերով թույլատրվում է հետևյալ պայմանների պահպանմամբ՝ ա) առանձին տարային միավորները միմյանց վրա դարսելիս ստորին շարքերը չեն ենթարկվում դեֆորմացիայի կամ քայքայման վերևում դարսված շարքերի ճնշումից; բ) տարային միավորների երկրաչափական ձևը թույլ է տալիս դարսել կայուն կույտ; գ) ծավալուն իրերը դարակաշարերում չեն դարսվում:

GARM GROUP

Կապ մեզ հետ

ՀԵՌԱԽՈՍՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

+374 99 706 607

+374 77 776 516

WHATSAPP

+374 77 776 516

E-MAIL

garm.group.am@gmail.com

ՀԱՍՑԵ

ք. Երևան, Արմենակ Արմենակյան փ., 129/5

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԺԱՄԵՐ

Երկ–Ուրբ 10:00–18:00

Գրեք մեզ WhatsApp-ով

Ուղղեք հեռախոսի տեսախցիկը QR-կոդին՝
կբացվի զրույց GARM GROUP-ի հետ

Արտադրողն իրեն իրավունք է վերապահում առանց նախնական ծանուցման փոփոխություններ կատարել արտադրանքի կոնստրուկցիայում և բնութագրերում: Տպագրության մեջ գույները կարող են տարբերվել իրականից: